չեմբերին բաժանեցին այսպէս. Սինօթական եպիսկոպոսաց 25 ոսկի, Սինօթական աբեղայից 15 ոսկի. Հասարակ եպիսկոպոսաց 5 ոսկի, Հասարակ աբեղայից 4 ոսկի, սարկաւագաց մէկ ոսկի. եւայլն եւայլն . . . »

Բնունի Սիմէօն Ըրքեպիսկոպոսի յիշեալ գրուխեան եզրակացութիւնն այն է, որ Էջմիածնի միաբանութիւնը միաբանական կառավարութեան ներքին վարչութեան կանոն չունենալով և կաթուղիկոսաց բանաւոր առանձին հրամաններին ենթարկելով՝ չեմ ասում եսական կամքին կամ հաճոյքին, ամեն կաթուղիկոսաց ժամանակ արտնջանաց և բողոքանաց պատճառ է ունեցել . . . :

1883 թուէն խօսք ու խնդիր կայ Էջմիածնայ միաբանութեան մէջ միաբանական ներքին վարչութեան կանոն խմբագրել, և հաստատել տալով՝ գործադրել, որ իւրաքանչիւր ոք՝ մեծն և փոքրն իրենց իրաւունքն ու պարտքը ճանաչեն և ըստ այնմ վարուեն:

Իսկ ընդհանրապէս գանազան կանոնագրքերից քաղելով՝ պատրաստում է հայ հոգեւորականութեան և ժողովրդեան հոգեւոր գործոց վարչութեան համար մի ամբողջացած եկեղեցական կանոնագիրք՝ Գերապատիւ անգամն Սինօդի Արիստակէս եպիսկոպոսն Դաւթեան, որը՝ երբ նախագահութեամբ Վեհափառ Հայրապետի ազգիս կազմեալ ազգային կրօնական ժողովին քննութեամբ յօդուածոց կանոնագրութեանն՝ ընդունեց և հաւան գտաւ, յայնժամ տպագրութեամբ կը հրատարակուի ընդ ամենայն աշխարհ մի օրինակ գործադրութեան համար: Եւ յիրաւի սրբան հարկաւոր է հայ հոգեւորականութեան և ժողովրդեան համար մի վաւերացուցած եկեղեցական կանոնագիրք: Տես «Տեղագիր Գեղարքունւոյ» յերես 441:

Եղիշէ պատմագիր վարդապետը Վարդանանց պատերազմի պատմութեան մէջ գրէ. «Օրէնք Աստուածային կացցեն սահման